



ՀՀ բնակատնային տնտեսության նախարարություն

«Հայաստան. քաղաքային ջեռուցման եւ տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ/ԳԷՖ/00035799 Ծրագիր

Երևանի Ավան համայնքի կենտրոնացված ջերմամատակարարման վերականգնման ծրագիր

Ավան բնակելի թաղամասի կենտրոնացված ջերմամատակարարման (ԿՋ) համակարգի վերականգնումը նախատեսված է Երևան քաղաքի 2005-2020թթ. գլխավոր հատակագծով:

«Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ/ԳԷՖ ծրագրի շրջանակներում ուսումնասիրվել են համակցված արտադրության կայանքների կիրառմամբ կենտրոնացված ջերմամատակարարման համակարգերի վերակառուցման հնարավորությունները և որպես առավել նպատակահարմար և հեռանկարային ընտրվել է Ավան շրջանը և մշակվել է նախնական տեխնիկա-տնտեսական հիմնավորում:

Ավան թաղամասի ԿՋ համակարգն ընդգրկում է մոտ 32 հազ. բնակչությամբ 218 բազմաբնակարան բնակելի շենքերի (305 հազար ք.մ. ընդհանուր մակերեսով) ջեռուցումն ու տաք ջրամատակարարումը, որի իրականացումը նախատեսված է ըստ փուլերի:



Ավանի բազմաբնակարան շենքերը

Առաջին փուլով նախատեսված է Ավան վարչական շրջանի 6՝ Իսահակյան, Թումանյան, Վարուժան, Նարեկացի, Քուչակ և Հովհաննիսյան թաղամասերի 76 բազմահարկ բնակելի շենքերի ԿՋ վերականգնումը: Այս թաղամասերի ջերմամատակարարումը իրականացվելու է մեկ էներգաաղբյուրից՝ «Caterpillar» ընկերության արտադրության G3520C մակնիշի համակցված արտադրության 2 կայանքներով (յուրաքանչյուրը 2000 կՎտ էլեկտրական և 2180 կՎտ ջերմային դրվածքային հզորությամբ) կահավորված ինքնավար ջերմային էլեկտրակայանից («ԻՋԷԿ-1»-ից), որի հանդիսավոր բացումը տեղի ունեցավ 2009թ. դեկտեմբերի 15-ին:

ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի մասնագետների կողմից կիրառված գնագոյացման մոտեցումները հնարավորություն են տալիս ապահովել արտադրված ջերմային էներգիայի մրցունակությունն ու մատչելիությունը, նպաստելով ջերմամատակարարման շուկայի ընդլայնմանը և սոցիալական ու քաղաքաշինական նշանակություն ունեցող կարևոր հիմնախնդիրների լուծմանը:



Ինքնավար ջերմային էլեկտրակայան



G3520C համակցված արտադրության կայանք

Այս մոտեցումները հիմք հանդիսացան ՀՀ Կառավարության 13.04.2006թ. թիվ 509-Ն որոշման համար, և հետագայում՝ «Օգտակար ջերմային պահանջարկի հիման վրա համակցված արտադրության

(կոգեներացիայի) էլեկտրական և ջերմային էներգիայի սակագների հաշվարկի մեթոդաբանության» համար (04.05.2007թ. քիվ 206-Ն որոշում):

Ներկայումս Ավանի 30 շենքերի բնակիչները մատչելի գներով օգտվում են կենտրոնացված ջերմամատակարարման ծառայություններից: Այստեղ ջերմային էներգիայի գինը կազմում է 16 դրամ/կՎտժ, այն դեպքում, երբ բնակարանային կաթսաների դեպքում այն կազմում է մոտ 20 դրամ/կՎտժ: Այս համեմատությունը միանշանակ վկայում է կենտրոնացված ջերմամատակարարման օգտին, որը ներմուծվող բնական գազի թանկացման պայմաններում էլ ավելի ակնհայտ ու շահավետ է դառնում:

«Հայաստան. քաղաքային ջեռուցման և տաք ջրամատակարարման էներգաարդյունավետության բարձրացում» ՄԱԶԾ/ԳԷՖ ծրագրի և Ավանի ԿՁ վերականգնման ծրագիրն իրականացնող «Հայ-Ռուսկոգեներացիա» ՓԲԸ-ի միջև 2006թ. դեկտեմբերի 26-ին ստորագրված Փոխըմբռնման հուշագրի համաձայն ՄԱԶԾ/ԳԷՖ ծրագիրն իր աջակցությունն է ցուցաբերել Ավանի ԿՁ վերականգնման ծրագրի ամբողջ ընթացքում:

«Հայ-Ռուսկոգեներացիա» ՓԲԸ-ի խնդրանքով ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրին աջակցել է Ավան համայնքի 76 բազմաբնակարան շենքերում կենտրոնացված ջերմամատակարարման համակարգին միանալու համաձայնությունը պարզելու համար իրականացված հարցումների և արդյունքների վերլուծությանը:



«ԻՋԷԿ-1»-ի բացումը



«ԻՋԷԿ-1»-ի բացումը

Ծրագրի փորձագետները բազմիցս հանդիպել են բնակիչների հետ՝ Ավանի ԿՁ համակարգի առանձնահատկությունների և առավելությունների մասին բացատրությունների տրամադրման նպատակով:

ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի բյուջեի հաշվին ձեռք են բերվել և «Հայ-Ռուսկոգեներացիա» ՓԲԸ-ին են հանձնվել 325 հատ ջերմային էներգիայի և տաք ջրի բնակարանային հաշվիչներ, ինչպես նաև 10 հատ տաք ջրի շենքային և ԿՁ հանգույցում տեղադրվող հաշվիչներ:

ՄԱԶԾ/ԳԷՖ ծրագրի շրջանակներում իրականացվել է 2009-2010 ջեռուցման սեզոնի ընթացքում Ավանի ԿՁ համակարգի աշխատանքի մոնիտորինգ:

Կիտոռյի Արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմի (ՄՁՄ) շրջանակներում իրականացման և համաֆինանսավորման նպատակով ՄԱԶԾ/ԳԷՖ Ծրագրի կողմից կատարվել է «Ավան» ծրագրի ջերմոցային գազերի արտանետման նվազեցման ներուժի գնահատումը: Ծրագիրը ներկայացրել է հայտ ՄԱԶԾ-ի տարածաշրջանային կենտրոնին՝ Կիտոռյի արձանագրության Մաքուր զարգացման մեխանիզմով Երևան քաղաքի ջերմամատակարարման վերականգնման առաջնեկային նախագծերի հիմնավորման փաստաթղթերի մշակման տեխնիկական աջակցության համար:

Ըստ Ծրագրի փորձագետների հաշվարկի, թողարկման համալիրի (76 շենք) ԿՁ իրականացման արդյունքում ջերմոցային գազերի արտանետումների նվազեցման չափը կկազմի մոտ 7300 տ/տարի: